Վահան Տերյան

Դու կգաս ու կրկին հեքիաթով կդյութես

Դու կգաս ու կրկին եքիաթով կդյութես

Լուսերես կցրես մառախուղն իմ հոգու

Ոսկեշող հայացքով և քնքուշ խոսքերով, որ գիտես միայն դու:

Կփարվես մեղմորեն, կփոես, կվառես անթառամ

Կուսական աշխարհիդ ծաղիկներն անծանոթ,

Կնստենք իրար մոտ, և հեռու կլինի առօրյան միաձայն ու աղոտ:

Մև թախիծն՝ իմ սրտից, մութ խոհերն՝ իմ հոգուց կգնան

Լույսիդ դեմ կցրվեն ըստվերները մռայլ,

Տառապանքը քեզ հետ՝ քաղցր հուշ, և խոսքերը՝ խորհուրդ կդառնան, կհագնեն ուրիշ փայլ:

Մթագին գիշերում, աշխարհում մթամած, խավարում,

Կվառենք չմեռնող, չմարող կրակը մեր հոգու,

Մեր ողջույնը սիրով կնետենք և՛ մարդկանց, և՛ երկրին, և՛ հեռուն ես ու դուն